

հաստատած է իր այս կարծիքը, վերջինս կու գայ դարձեալ այս վարկածը խնդրոյ նիւթ բնել:

«Մ. Մարթէնի այն հաւատքը թէ այս գորգերը չինական օրինակներէ ներշնչուած են՝ ինծի երկրայելի կը թուի: Զանոնք զարդարող կենդանիներու չափազանց պայմանադրական ոճէն կը հետեւի թէ՛ երբ վիշապի խօսք կ'ըլլայ, ենթադրու թիւն մըն է այդ. իսկ գալով փիւնիկին՝ ասիկա ինծի երեւակայական կը թուի, ինչպէս նաեւ մեծագոյն մասը այն անասուններուն, զոր անոնց մէջ տեսնել կը կարծեն: Բայց եթէ նոյն իսկ ընդունինք թէ այդ չինական առասպելային կենդանիները սոյն հայկական գորգերուն վրայ կարելի է գանազանել, այս կերպով Չինաստանի ուղղակի ազդեցութիւնը հաստատուած չ'ըլլար, քանի որ պարսկական արուեստը, մանաւանդ Մոնկոլեան շրջանին, իբր միջնորդ ծառայած կրնայ ըլլալ: Գալով զոյգ առ զոյգ շարուած եւ յիսական ոճով կենդանիներուն, պէտք է դիտել թէ բոլոր արուեստներէն չինականը ամենէն անհամաչափը, եւ ամենէն բնապաշտն է, եւ թէ սոյն զոյգ առ զոյգ շարուածքը՝ իբրեւ զուտ արեւելեան աւանդութիւն մը նկատելու է: Յետոյ անպատշաճ կերպով արմաւենեակ (palmette) կոչուած զարդին գալով, որ ուրիշ բան չէ այլ պայմանադրական ոճով գծագրուած չինական լուտասը, ինչպէս որ թուրք ծաղկողներուն մինչեւ հիմա պահպանած խաբայի անունը կ'ապացուցանէ, վիշապին եւ փիւնիկին մասին նախընթաց դիտողութիւնը անոր. եւս կարելի է պատշաճեցնել»²: Ա. Ս. ի այս հատուածին ինչ ինչ կէտերուն մասին դիտողութիւններս: Վիշապին ենթադրութիւն մը ըլլալուն կամ չըլլալուն մասին նախապէս խօսեցայ ցոյց տալով որ ենթադրութիւն մը չէ անոնց Հայկական գորգերուն մէջ գոյութիւն ունենալը, այլ փաստուած իրականութիւն: Գալով փիւնիկին մասին, առ այժմ կ'անցնիմ, նպատակ ունենալով ուսումնասիրութեանս վերջը վերադառնալ: իսկ լուտասը

(lotus) ըստ իս Չինաստանէն չենք առած այլ Եգիպտական կամ աւելի հաւանականութեամբ Ասորական քաղաքակրթութեանէն, ինչպէս որ նախ Յոյները եւ յետոյ Հռոմէացիք կամ Իտալացիք ալ փոխ առին, որոնցմէ անցաւ Պարսկական հին արուեստին: Ա. Ս. ի հետ համամիտ եմ որ Չինական անհամաչափ եւ բնապաշտ



Դրամ Մեծմ Տիգրանի

արուեստը կը տարբերի զխոլին Հայկական ոչ բնապաշտ եւ համաչափ արուեստէն, ուր կրկնութիւնը՝ համաչափօրէն կը տիրապետէ. եւ ես համամիտ չեմ որ Չինականէն Հայկականին վրայ եղած որ եւէ ազդեցութիւն Պարսկականին միջնորդութեամբ եղած ըլլայ. ահա թէ ինչու:

Արդարեւ Պարսկ արուեստին գրական-բանաստեղծական ճիւղը ազդեց մեր գրականութեան այդ ճիւղին վրայ, իրաւ է նաեւ որ միայն այդ ճիւղը նկատելի կերպով գոյութիւն ունեցաւ եւ զարգացաւ մեր մօտ, մեր կոստանդին Երզնկացիները, Յովհաննէս Թլկուրանցիները, Խաչատուր կեչառեցիները, Գրիգորիս Աղթամարցիները, Քուչակները, Ֆրիկները, Առաքելները՝ մանրանկարները կ'երեւան Խայամի, Հաֆըզի, Սաատի, Ճամիի, Ասաբի, Աղղարի, եւայլն Պարսկ բանաստեղծներուն,

1. Հայկական գորգերը. — Ա. Ս. — Շանթ կ. Պոլիս 1919 էջ 420, Հմմտ. Tapis d'orient de Musée Commercial de Wienne. — 2. Շանթ էջ 420: